ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ԹԱՓՈՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 21. ԹԱՓՈՆՆԵՐԻ ՕԳՏԱՀԱՆՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՈՅԱՑՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Թափոնների օգտահանման և դրանց գոյացման ծավալների նվազեցման ապահովմանն ուղղված միջոցառումները նախատեսում են՝

ա) թափոնների գոյացման և տեղադրման ծավալների սահմանաքանակների սահմանում.

բ) շրջակա միջավայրում թափոնների տեղադրման համար բնապահպանական ~~վճարի~~հարկի սահմանում՝ տարբերակելով դրանց վճարման դրույքաչափերը՝ ելնելով թափոնների վտանգավորության աստիճանից և տեղադրման տարածքի տնտեսական՝ հողի կադաստրային արժեքից.

գ) շրջակա միջավայրում թափոնների տեղադրման համար օրենսդրությամբ սահմանված բնապահպանական ~~վճարներից~~հարկերից ստացված միջոցների նպատակային օգտագործում՝ թափոնների օգտահանմանն ու դրանց ծավալների նվազեցմանը նպատակաուղղված միջոցառումների ֆինանսավորման համար.

ՀՈԴՎԱԾ 22. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ~~ՎՃԱՐՆԵՐԸ~~ՀԱՐԿԸ

~~Շրջակա միջավայրում թափոնների տեղադրման համար սահմանվում են բնապահպանական վճարներ՝ «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:~~ Հատուկ հատկացված տեղերում ընդերքօգտագործման, արտադրության և (կամ) սպառման թափոնների տեղադրման և (կամ) պահման համար բնապահպանական հարկը սահմանում է Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով